ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 7, 1963 Общественные науки

Ռուբեն Ռ. Նասյան

# XIX ԴԱՐԻ ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԻՆԴՈՆԵԶԻԱՅԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ

*Սույն հոդվածի նպատակն է պարզաբանել այն կապը, որ եղել է հեռավոր Ինդոնեզիայի հայ գաղութի և 19-րդ դարի հայ ազատագրական շարժումների միջև։*

*Աշխարհով մեկ տարածված տարագիր հայության բեկորներից մեկն է Ինդոնեզիայի հայ գաղութը, որը հանդիսանում է Նոր-Ջուղայի գաղթականության մեկ ճյուղավորումը։*

*Ինդոնեզիայի հայերը գաղթել են այստեղ Նոր-Ջուղայից և Հնդկաստանի զանազան քաղաքներից։ Գաղթի գլխավոր պատճառը եղել են պարսիկ բռնակալների հալածանքների հետևանքով առևտրի ասպարեզում Նոր-Ջուղայի հայ վաճառականների կրած կորուստները[1]։ Նոր-Ջուղայի վաճառականները իրենց կորցրած տնտեսական դիրքերը վերականգնելու համար մեկնում էին Հնդկաստանի և Ինդոնեզիայի քաղաքները, ուր գտնվող հումքի հարուստ աղբյուրները վաղուց էին հրապուրել եվրոպական գաղութարարներին։*

*Ինչպես հայտնի է, Ինդոնեզիան 1602 թվականից գտնվում էր հոլանդական տիրապետության տակ։ Հոլանդական Արևելա-Հնդկական ընկերության 1656 թ. թղթածրարներից մեկում կա տեղեկություն այն մասին, որ Մակասար քաղաքում (Ցելեբես կղզի, այժմ Սուլավեսի) հաստատված է եղել Խոջա Սոլիմա անունով մի հայ վաճառական։ Սա ամենահին տվյալն է Ինդոնեզիայում գտնվող հայերի վերաբերյալ։*

*Ինդոնեզիայի հայ գաղութը հիմնականում կազմավորվել է հաջորդ՝ 18-րդ դարի առաջին կեսին։ Դրա ապացույցն է հանդիսանում այն փաստը, որ Հոլանդական Արևելա-Հնդկական ընկերությունը 1747 թ. մարտի 31-ին մի հրովարտակով Ինդոնեզիայի հայերին տալիս է ազատ քաղաքացու իրավունք։ Դա վկայում է, որ այդ ժամանակ Ինդոնեզիայում գտնվում էր ստվարաթիվ հայություն[2]։ Բայց գաղութի բնակչությունը հատկապես ավելանում է 18-րդ դարի վերջերին, երբ Հնդկաստանից Ինդոնեզիա են գալիս բավական թվով նոր հայեր՝ Հնդկաստանում տեղի ունեցող մի շարք իրադարձությունների պատճառով։*

*Այս գաղթավայրում հայերը ժամանակի ընթացքում կարողանում են մեծ դիրքերի հասնել, հավասարվելով առևտրի ասպարեզում եվրոպացիներին։ 1780-ական թվականներից սկսած Ինդոնեզիայում առևտրական լայն գործունեություն են ծավալել Հովհ. Մսնուել Շերիմանյանը, Եղիա Հակոբյանը և Վարդան Գասպարյանը[3]։*

*Այս շրջանում բախտի նոր ասպարեզ փնտրելու համար դեպի Ինդոնեզիա ուղևորվող հայերից մեկն էր Գևորգ Մանուկյանը, որ Մադրասի խոշոր վաճառականներից էր։ Օժտված լինելով հայրենասիրական ջերմ ոգով, Գևորգ Մանուկյանը նպատակ է ունեցել Լոնդոնում հիմնել հայ ազգային համալսարան։ Նա նյութական մեծ կարողությունների տեր լինելով, դրամական փոխատվություն է արել հոլանդական կառավարությանը, վայելելով միաժամանակ հոլանդական նահանգապետի վստահությունը։*

*Գևորգ Մանուկյանի հետ միասին Ջավա են գալիս նաև նրա երկու քույրերը՝ Մարիամ Հարությունյանը և Թագուհի Մանուկյանը, որոնց նախաձեռնությամբ և նյութական օժանդակությամբ կարճ ժամանակամիջոցում գաղութում հիմնադրվում են մի շարք ազգային հաստատություններ։*

*Եվ ահա 19-րդ դարի առաջին կեսում սկիզբ է առնում Ինդոնեզիայի հայ գաղութի ազգային-հասարակական եռուն կյանքը։ 1831 թ. Բատավիայում (այժմ Ջակարտա) Հակոբ Հարու-*

---

*1 Հ. Հ ո ր դ ա ն ա ն յ ա ն, Նետրլանդական Արևելեան Հնդկաստանայ հայ գաղութի պատմութիւն, սկզբէն մինչ մեր օրերը, Երուսաղեմ, 1937, էջ 11—13։*

*2 Հ. Հ ո ր դ ա ն ա ն յ ա ն, էջ 15—16։*

*3 Հ. Հ ո ր դ ա ն ա ն յ ա ն, էջ 72։*

*4 Գ. Գ ա ս պ ա ր յ ա ն, Համառօտ կենսագրութիւն երկուց բարերարաց Ջուղայու, Նոր-Ջուղա, 1883, էջ 1—7։*

թյունյանը հիմնադրում է մի մատուռ՝ Ս. Հռիփսիմե անունով[5]։ Իսկ 1852 թ. Բատավիայում զումարված մի ժողովում որոշվում է ստեղծել մի կազմակերպություն «Հայկյան միաբանություն» անունով՝ Ինդոնեզիայի չքավորներին և որբերին օգնելու համար։ Այդ կազմակերպության օգտին ձեռնարկված հանգանակություններ մասնակցում են Մարիամ Հարությունյան և Թադուհի Մանուկյան քույրերը՝ մի պատկառելի գումարով։ Այնուհետև՝ 1854 թ. երկու քույրերի ակտիվ աջակցությամբ կառուցվում է Բատավիայի Ս. Հովհաննես եկեղեցին։ Մատաղ սերնդին մայրենի լեզվով կրթություն տալու համար, 1855 թ. հիմնվում է «Մանուկ և Հարություն» ուսումնարանը՝ երկու քույրերի ջանքերով. ուսումնարանի առաջին տնօրեն է նշանակվում հմուտ գրաբարագետ Խաչիկ Թովմասյանը։ Ուշագրավ է այն փաստը, որ սույն դպրոցում սովորում էին նաև եվրոպացիների զավակներ։ Այնուհետև, մեկ տարի անց, ուսումնարանին կից ստեղծվում է մատենադարան, ուր պահպանվել են հայերեն, անգլերեն և հոլանդերեն թերթեր, հանդեսներ և գրքեր[7]։ Ինդոնեզիայի հայերը մեծ մասամբ գաղթած լինելով ուղղակի Նոր-Ջուղայից, սերտորեն կապված էին իրենց վաղեմի հայրենիքի հետ, որի հանդեպ նրանք հոգու խորքում պահպանել էին կարոտի և սիրո ջերմ զգացմունքներ։ Նրանք ամեն կերպ աշխատում էին օժանդակություն ցույց տալ Նոր-Ջուղայի իրենց հայրենակիցներին։ 1858 թ. Նոր-Ջուղայի չքավորներին օգնելու համար նրանք հիմնադրում են «Գանձանակ Ջուղայու տնանկաց»-ը։ Այնուհետև՝ 1864 թ. Բատավիայում կայացած մի ժողովում որոշվում է ստեղծել մի ուրիշ գանձանակ, ազգային գրավոր աշխատությունների տպագրության գործին օժանդակելու համար[8]։

Ինդոնեզիայի հայ գաղութի ազգային-հասարակական կյանքում խոշոր դեր են կատարել Մանուկ Հորդանանյանը, Բարսեղ, Պողոս և Կարապետ Անդրեասյանները, Եղիազար Գասպարյանը, Մինաս Հովակիմյանը, Աղանուր Աղանուրյանը, Գևորգ Ջաքարյանը և շատ ուրիշներ։ Սրանք բոլորն էլ վաճառականներ էին, որոնք միաժամանակ առատաձեռն մասնակցություն էին բերում այս կամ այն ազգային ձեռնարկման համար գաղութում կազմակերպված հանգանակություններին[9]։

Գաղութի բարգավաճմանը զուգընթաց, աստիճանաբար նորանոր գաղթականական հատվածներ են անցնում դեպի Ինդոնեզիա, որոնք հաստատվում են զանազան քաղաքներում և սկսում են ծավալել առևտրական եռուն գործունեություն։

Արդեն 19-րդ դարի կեսերից սկսած ազդեցիկ հայ վաճառականներ կային՝ Սեմարանգում (ուր հայերը բնակություն էին հաստատել նույն դարի սկզբից), Սուրաբայայում, Ջապարայում, Ջերիբոնում, Թեգալում, Բանդունգում, Սուրակարտայում, Մակասարում և այլ նշանավոր քաղաքներում[10]։

Ինդոնեզահայ վաճառականներից շատերն իրենց գործունեությունն այնքան էին զարգացրել և ընդլայնել, որ առևտրական կապերի մեջ էին նաև Ավստրալիայի, Սինգապուրի, Հնդկաստանի, Ճապոնիայի, Պարսկաստանի, Եվրոպայի և այլ շուկաների հետ[11]։ Ինդոնեզիայի առևտրի զարգացման գործում մեծ է եղել տարբեր ժամանակներում հիմնադրված բազմաթիվ հայ առևտրական տների և ընկերությունների դերը։

Ինդոնեզիայի հայերից ոմանք, հանդիսանալով զարգացած և լեզուներ իմացող անձնավորություններ, պատասխանատու վարչական պաշտոններ են վարել տեղական կառավարության մեջ, վայելելով հոլանդական պետության վստահությունը։ Այսպես, օրինակ, 19-րդ դարի առաջին կեսում Հովսեփ և Հովհաննես Պետրոսյան եղբայրները և Էմիլ Սատուրը Ջավայում նահանգապետի օգնական են եղել։ Իսկ 1863 թ. Ա. Պ. Աղանուրը Ջավայի նահանգապետի հրամանով նշանակվում է պետական թարգման[12]։

Սակայն՝ չնայած առևտրական և հասարակական կյանքում կարճ ժամանակվա ընթացքում ունեցած հաջողություններին, Ինդոնեզիայի հայ գաղութի բարգավաճման շրջանը երկար չի տևում։ 1870-ական թթ. գաղութը սկսում է ապրել տնտեսական անկում, վրա է հասնում կալվածական հասույթների և առևտրական տների եկամուտների նվազում, որի պատճառը կառավա-

---

5 «Բազմավէպ», Վենետիկ, 1899, էջ 464։

6 «Լոյս», Թիֆլիս, 1904, էջ 189։

7 Թ. Գուշակյան, Հնդկահայք, Երուսաղեմ, 1941, էջ 274—277։

8 Հ. Հորդանանյան, էջ 22։

9 Թ. Գուշակյան, էջ 276։

10 Հ. Հորդանանյան, էջ 23—24։

11 «Բազմավէպ», 1899, էջ 465։

12 Հ. Հորդանանյան, էջ 26—29։

ության կողմից հովանավորվող հոլանդական առևտրական տների և ընկերությունների հզորացումն էր։ Այսպիսի պայմաններում Ինդոնեզիայի հայ գաղութը այլևս անկարող էր դիմանալու մրցակցությանը։ Դրա հետևանքով գաղութի մեծահարուստ վաճառականներից շատ շատերն ստիպված էին հեռանալ Ինդոնեզիայից։ Մի խոսքով գաղութի տնտեսական կարողությունը զգալիորեն նվազում է, որի հետևանքով 1872 թ. փակվում է «Մանուկ և Հարություն» ուսումնարանը (այն հետագայում կրկին վերաբացվում է Սուրաբայայում)[13]։ Սակայն վայրկյանի այս շրջանը երկար չի տևում, հետագա տարիներին գաղութը կարողանում է մասամբ վերականգնել իր նախկին դիրքերը, իսկ ազգային կյանքը համառորեն շարունակում է պահպանել իր գոյությունը։

1880 թ. հունվարի 6-ին նահանգապետի հրովարտակով վավերացվում է հայոց ազգային սահմանադրությունը շարադրված հոլանդերեն լեզվով, որն այնուհետև թարգմանվում է գրաբարի և անգլերեն լեզվով։ Այս օրենքը, որ կոչվում է «Սահմանադրութիւն և կարգադրութիւն Հայոց ի Ջավա», բաղկացած է 27 կետերից։ Ըստ սահմանադրության՝ տարին մեկ անգամ Բատավիայում պետք է գումարվեր ընդհանուր ժողով, ուր քվեարկությանը կարող էին մասնակցել այն տղամարդիկ, որոնք առնվազն 21 տարեկան էին և 2 տարուց ոչ պակաս ապրել էին Ջավայում։ Այս ժողովում պետք է ընտրվեր բատավարնակ հինգ անձնավորություններից կազմված մի վարչություն, որը կոչվում է «Հանրական ատեան յանձանձանաց ժողովրդեան հայոց ի Ջավա»։ Սահմանադրության մեջ կային հատուկ կետեր եկեղեցու, «Մանուկ և Հարություն» ուսումնարանի և «Հայկյան միաբանության» անունով եղած ազգապատկան կալվածների վերաբերյալ, ուր խոսվում էր դրանց մատակարարման պայմանների մասին։ Վերջին կետը վերաբերում էր այն մասին, թե Ջավայի հայության վերջանալու դեպքում գաղութի ազգապատկան սեփականությունները պետք է անցնեն էջմիածնի կաթողիկոսի տրամադրության տակ և հետագայում հատկացվեն հայ ժողովրդի լուսավորության գործին[14]։

Ինչպես արդեն ասացինք, Ինդոնեզիայի հայ գաղութի ծագումը առնվազն 17-րդ դարից է։ Բայց միայն 19-րդ դարի առաջին կեսին է, որ նա կազմակերպվում է որպես ազգային հավաքականություն, դրա հետ ստեղծելով ազգային-մշակութային կյանք։ Եվրոպայի, Ասիայի և հատկապես Հնդկաստանի հայ գաղութներում ծավալվող մտավորական շարժումը մեծ ոգևորություն էր ստեղծում հեռավոր Ինդոնեզիայում, ուր ապրող սակավաթիվ մտավորականներն ամեն ջանք գործադրում էին գաղութի մտավոր մակարդակը բարձրացնելու համար։ Ինդոնեզիայի հայ մտավորականության ներկայացուցիչներից էին՝ Գ. Զաքարյանը, Խ. Թովմասյանը, Ա. Աղանուրը, Գ. Տեր-Գասպարյանը և ուրիշներ, որոնց դրչին են պատկանում մի շարք արժեքավոր ուսումնասիրություններ։ Նրանցից շատերը արձագանքել են նաև ժամանակակից մամուլում տեղ գտած՝ հայ մշակույթի վերաբերյալ այս կամ այն հարցի [illegible] նվիրված բանավեճերին։ Մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև ինդոնեզահայ բանաստեղծների ստեղծագործությունները։ Գաղութի անդամներից առաջավոր մարդիկ մտածում էին իրենց տնտեսական կարողություններից բաժին հանել համահայկական լուսավորության գործի համար, աշխատում էին օժանդակել աշխարհի զանազան վայրերում գտնվող հայկական մշակութային ձեռնարկումներին՝ դրպրոցներին, տպարաններին, մամուլին և միաժամանակ բազմաթիվ գրքերի տպագրության մեկենաս էին հանդիսանում։

Ինդոնեզիայի հայ գաղութի անդամները չէին բավակտանում միայն առևտրական գործունեությամբ և շահույթ հետապնդելով. նրանք միաժամանակ ազգեցիկ ուժ էին հանդիսանում նաև համազգային կյանքում և բոլոր առիթներով արձագանքում էին նրա պահանջներին։ Ինչպես Նոր-Ջուղայի և Հնդկաստանի հայերը, այնպես էլ ինդոնեզահայերն իրենց մեջ պահպանել էին դեպի հայրենի բնաշխարհը վերադառնալու ցանկությունը։ Դեպի հայրենիք վերադառնալու նրանց ձգտումն աստիճանաբար ավելի էր ուժեղանում այն պատճառով, որ Ինդոնեզիայի հայ վաճառականներն այլևս չէին կարողանում դիմանալ հոլանդական մրցակցությանը։ Եվրոպական կապիտալը հետզհետե մեկուսացնում էր նրանց՝ դուրս մղելով առևտրական շուկաներից։ Նման հանգամանքները ստիպում էին մտածել ինդոնեզահայերին՝ նպաստելու օտար լծի տակ տառապող հայրենիքի փրկության գործին, հրաղելով տեսնել իրենց հայրենիքը ազատագրված և անկախ։ Հնդկահայերի նման ինդոնեզահայերը ևս Հայաստանի ազատագրության բախտը կապում էին Ռուսաստանի հետ, ուստ հերոսական ժողովրդին համարելով Հայաստանի միակ ապատարարը։

---

13 Թ. Գուշակյան, էջ 277—278

14 Հ. Հորդանանյան, էջ 46—52։

1828 թ. ռուս-պարսկական պատերազմի հետևանքով, ռուս ժողովրդի օժանդակությամբ հայրենիքի իրագործված ազատագրությունը, պարսկական լծից, արտակարգ ուրախություն է պատճառում Ջավա կղզու Սեմարանգ քաղաքում բնակություն հաստատած նշանավոր վաճառական Հովսեփ Ամիրխանյանին։ Ղարաբաղցի այս վաճառականը, որ անսահման հարստություն էր դիզել Ջավայում, Հայաստանի ազատագրության լուրը լսելիս, ցանկանում է վերադառնալ իր հայրենիքը։ Այս կապակցությամբ Ամիրխանյանը 1829 թ. հոկտեմբերի 20-ին Ներսես Աշտարակեցուն ուղղած իր նամակում գրում է. «Այժմ մենք աւելի երջանիկ ենք մեր նախնիքներից, վասնզի արժանացանք տեսնել ամենասիրելի հայրենեաց ազատութիւնը։ Եւ ուրեմն՝ սրբազան պարտաւորութիւն ենք համարում արտայայտել մշտական երախտապարտութեան մեր խորին զգացմունքը Ռուսիոյ կայսեր, մեր հին հայրենեաց մեծահոգի ազատիչին... որ առաջին թագաւորը եղաւ՝ Արարատեան աշխարհում ազգիս խաղաղութիւն և ազատութիւն պարգևող»։ Այնուհետև ավելացնում է, որ 1830 թ. մտադիր է իր սեփական նավերով ուղևորվել Հոլանդիա, ուր կարևոր գործեր ունի հոլանդական թագավորի հետ, որից հետո կայցելի Ռուսաստան՝ կայսրի հետ հանդիպում ունենալու համար։ Միաժամանակ միամտաբար խնդրում է Ներսես Աշտարակեցուց՝ տեղեկություններ ուղարկել իրեն, թե Ռուսաստանը ի՞նչ մտադրություն ունի Հայաստանը ղեկավարելու վերաբերյալ. «արդեօք ի՞նքը տիրապետելով պիտի կառավարէ Հայաստանը, թէ՞ պիտի դարձնէ սորան իւր տէրութեան մի առանձին անկախ մասն»։ Ի վերջո նշում է, որ եթե հնարավոր լինի, մտադիր է գնելու Ղարաբաղը Փայտակարանի հետ միասին. «կամ թէ մի որոշ հարկ տալ» նրանց տիրելու համար։ Նա հիշատակելով իր անսպառ հարստությունների մասին, գրում է. «Բայց բաղդի այդ բոլոր ճոխ պարգևները տակաւին ինձ չեն մխիթարում, երբ մտաբերում եմ թէ ինչ վիճակի մէջ է իմ սիրելի հայրենիքը»։ Նամակի վերջում ցանկություն է հայտնում իր ընտանիքով և գումարներով գալ Հայաստան և նրա ծաղկման ու բարգավաճման համար մի այնպիսի գումար հատկացնել, որը կարողանա տարեկան 500.000 ռուբլի եկամուտ բերել, թե՛ իր կենդանության ժամանակ և թե՛ մահվանից հետո։

Հովսեփ Ամիրխանյանի նամակը ստանալով, Ներսես Աշտարակեցին այն ուղարկում է Պետերբուրգ՝ Խաչատուր Լազարյանին, որը նամակը ռուսերենի թարգմանելով ներկայացնում է կոմս Բենկենդորֆին։ Վերջինս այդ մասին տեղյակ պահելով ռուսաց կայսրին, պատասխանում է, որ ցարը ցանկանում է, որպեսզի Ամիրխանյանը գա իր մոտ, իսկ նրա պահանջած տեղեկությունները ցարն անձամբ կտա Ամիրխանյանին, հանդիպելուց հետո[15]։

Արխիվային մի նորահայտ տեղեկության համաձայն՝ Հովսեփ Ամիրխանյանը ցարին առաջարկել է իրեն հանձնել Արարատյան նահանգը, այնտեղ հայկական իշխանություն հիմնելու համար՝ հանձն առնելով այդ դեպքում նրան վճարել տարեկան կես միլիոն ֆրանկ. Նիկոլայ ցարը մերժել է այդ առաջարկը, հայտնելով, որ այդ երկրամասը արդեն Ռուսաստան է, իսկ ինքը՝ Հայաստանի արքա[16]։

Սակայն ցարական Ռուսաստանի մտադրությունները շուտով պարզվում են Հայաստանի նկատմամբ։ Հնդկահայերը, այդ թվում Ջավայի նշանավոր վաճառական Հ. Ամիրխանյանը, որոնք մեծ հույսեր էին կապում Ռուսաստանի հետ, խոր հիասթափություն են ապրում։ Նրանք հասկանում են, որ Ռուսաստանի օգնությամբ Հայաստանի ազատագրումը պարսկական բռնակալության ծանր լծից՝ չէր նշանակում, որ հայրենիքը քաղաքական անկախություն էր ստանում։ Ցարական Ռուսաստանը Հայաստանին գաղութացնում էր շահագործելու նպատակով։ Բայց և այնպես Ռուսաստանի տիրապետության տակ ընկնելը և իր բախտը ռուս մեծ ժողովրդի հետ կապելը գրական երևույթ էր և շատ ավելի ձեռնտու էր հայ ժողովրդի համար, քան պարսկաց բռնապետության ահավոր լուծը։

Հայ ժողովրդի ազատագրման գաղափարը Ինդոնեզիայի հայ գաղութում արձագանք է գտնում նաև մի քանի տասնամյակ հետո, Արևմտյան Հայաստանում ազգային շարժումների ժամանակաշրջանում։ Եվ պետք է ասել, որ այնուհետև ինդոնեզահայերի ուշադրության առարկան հանդիսանում է հիմնականում Արևմտյան Հայաստանի ազատագրման հարցը։

19-րդ դարի կեսերից սկսած նոր թափով էին սկսել ծավալվել արևմտահայերի ազգային-ազատագրական շարժումները սուլթանական բռնակալության պայմաններում։ Այս շրջանում

---

15 Ա. Երիցյան, Ամենայն հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի հայք 19-րդ դարում, մասն Բ, Թիֆլիս, 1895, էջ 507—511։

16 Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարանի արխիվ, կաթողիկոսական դիվան, թղթապանակ № 17, վավերագիր № 68, էջ 4։

թուրքական կառավարությունը միջոցներ էր ձեռք առնում Զեյթունի և Սասունի կիսանկախությունը վերացնելու համար։

Դեռևս 18-րդ դարից սկսած փորձեր էին արվում նվաճելու կիսանկախ Զեյթունը։ 1770-ական թթ. մինչև 1850-ական թթ. վերջերը Զեյթունի դեմ կատարված բազմաթիվ ոտնձգություններից ու արշավանքներից հետո, 1862 թ. մեծ ապստամբությունը իր ուրույն տեղն ունի հերոսական Զեյթունի պատմության մեջ[17]։

Զեյթունի այդ կռիվների արձագանքները տարածվեցին ամենուրեք. նրա օրինակին հետևելով ազատագրական շարժումներ բռնկվեցին Արևմտյան Հայաստանի մի շարք վայրերում՝ Վանում, Մուշում, Էրզրումում, Զարսանջակում և Կ. Պոլսում։ Զեյթունի հերոսամարտը մեծ արձագանք է գտնում նաև ժամանակի հայկական մամուլում, ուր տպագրվում են այդ իրադարձությունը լուսաբանող բազմաթիվ հոդվածներ։ Վերոհիշյալ դեպքերի մեկնաբանմանը և վերլուծմանն անդրադառնում են այնպիսի պարբերականներ, ինչպես Զմյուռնիայի «Ծաղիկ»-ը և Կ. Պոլսի «Մեղու»-ն։ Այդ կապակցությամբ նաև Կարապետ Շահնազարյանը հանդես գալով Ֆրանսիայում լույս տեսնող «Փարիզ» կիսամսյա լրագրում, գրում է. «Մարաշի հայերն թրքայ սրով կոտորուեցան. թերևս Զէյթունի և այլ հայաբնակ գիւղերու կամ քաղաքներու մէջ ալ մեր ողորմելի համազգիներն նոյն ցաւալի օրհասին հանդիպեր են կամ պիտի հանդիպին. ով գիտէ թէ սպանուածներու անտէր ընտանիք այսօր ինչ խեղճութեան մէջ են»[18]։

Զեյթունի կոտորածի ցավալի լուրը ցնցում է նաև Ինդոնեզիայի հայերին, որոնք մինչ այդ շատ անդամներ էին իրենց ակտիվ մասնակցությունը հանդես բերել զանազան համազգային հայրենասիրական ձեռնարկումներին և ազգային աղետների հետևանքով թշվառացած կարոտյալներին օգնելու հանդանակությանը։ Այս առթիվ Բատավիայում հավաքվում է 568 ռուփի, որը փոխանակագրով հասցվում է Փարիզ՝ թերթի խմբագրությանը, որպեսզի այն, ինչքան հնարավոր է շուտ, ուղարկվի հերոսամարտի տուժածներին։ Նախքան այն, թերթի միջոցով այդ նպատակի համար հավաքված գումարը 2085 ֆրանկ էր, որը, միանալով Բատավիայից ուղարկված գումարի հետ, կազմեց 3266 ֆրանկ 44 սանտիմ։ Արժանի է հիշատակման, որ Բատավիայի նվիրատուների անունների ցանկում եղել են նաև բազմաթիվ կանայք[19]։

Այնուհետև ևս տարբեր շրջաններում, հերոսական Զեյթունում տեղի ունեցած դեպքերը միշտ էլ գտնվել են ջավահայերի ուշադրության կենտրոնում. նրանք ամեն կերպ աշխատել են իրենց օգնությունն ու կարեկցությունը հանդես բերել զեյթունցիների նկատմամբ։ Դրա վառ ապացույցն է հանդիսանում նաև նրանց օժանդակությունը զեյթունցիներին՝ 1887 թ. հուլիսի 26-ին Զեյթունում պատահած մեծ հրդեհի առթիվ, որի պատճառով սոսկալի չքավորության մատնվեց ողջ ժողովուրդը։ Այդ առթիվ Մարսելլում հրատարակվող «Արմենիա» թերթում տպագրվում է թերթի խմբագիր Մկրտիչ Փորթուգալյանի կոչը «Օգնենք զեյթունցիներին» վերնագրով, ուր նկարագրվում է, թե բազմաթիվ հայեր Զեյթունում մնացել են անապատան վիճակում, որը մինչև անգամ հուզել է օտարազգիների սրտերը։ Այդ կոչը մեծ ներգործություն է ունենում զանազան վայրերում, այդ թվում նաև Բատավիայի հայերի մեջ, որոնք մի գումար են հանդանակում ի նպաստ իրենց առասպելական սխրագործություններով հայտնի զեյթունցիներին[20]։

Զեյթունի 1862 թ. ապստամբությունը խթան հանդիսացավ ազգային-ազատագրական գաղափարների ավելի մեծ թափով ծավալմանը Արևմտյան Հայաստանում։ 70-ական թթ.-ից մի նոր էտապ է սկսվում հայ ազատագրական շարժումների պատմության մեջ, երբ ավելի են ուժեղանում հայության նկատմամբ եղած հալածանքները և ճնշումները։ Սկսում է նոր ուժով արծարծվել հայկական հարցը, որը ներկայացվում է քննարկման Բեռլինի հանրահռչակ կոնգրեսին՝ 1878 թ.։ Ինչպես հայտնի է՝ այս կոնգրեսում վերանայվեց Սան-Ստեֆանոյի պայմանագիրը, ընդ որում պայմանագրի 16-րդ հոդվածը, որը վերաբերում էր Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելուն։ Պետք է նշել, որ կոնգրեսում հայկական հարցի նկատմամբ ոչ մի նպաստավոր քայլ չկատարվեց։

Սակայն մայր հայրենիքի ողբալի դրությունը չէր վրիպում ինդոնեզահայ մտավորականության տևական ուշադրությունից։ Արդեն հոլանդական տիրապետության շրջանում Ինդոնեզիայի առանձին նահանգներում ծագած բազմաթիվ ապստամբությունները՝ ուղղված հոլանդական գա-

---

17 Ընդհանուր տեղեկությունների համար տե՛ս Վ. Մելիքսետյան, Զեյթունի հերոսամարտերը, Երևան, 1960։

18 «Փարիզ» (թերթ), 1862, № 75։

19 «Փարիզ», 1863, № 84։

20 «Արմենիա» (թերթ), Մարսելլ, 1887, № 12, 1888, № 71։

զութատիրության դեմ, խոր ազդեցություն էին թողնում նաև այդ երկրում հաստատված փոքրաթիվ հայության վրա. ինդոնեզահայերը մտածում էին, որ հայ ժողովուրդը նույնպես իրավունք ունի անկախ և ինքնիշխան լինելու, ինչպես բոլոր ժողովուրդները։ Ստրկացած Հայաստանի ծանր վիճակը մեծ մտահոգություն էր պատճառում ինդոնեզահայերին, որոնք սկսում էին հետզհետե ավելի խանդավառվել Հայաստանի ազատագրության գաղափարով և մինչև անգամ ժամանակակից մամուլում հանդես էին գալիս հայրենի երկրի ժողովրդին օգնություն ցույց տալու վերաբերյալ կոչերով ու նամակներով։

Բատավիայից ինդոնեզահայ մտավորականության ներկայացուցիչներից մեկը՝ Ռ. Գասպարյանը «Արմենիա» թերթի էջերում տպագրած մի նամակով գտնում է, որ հայ ժողովրդի մեջ պետք է տարածել ինքնօրինության գաղափարը և «յեղափոխական շարժմանց հոգին բուն Հայաստանի համազգեաց մէջ», որպեսզի պատեհ առիթով ազատագրական պայքարի դրոշ բարձրացվի ընդդեմ բռնակալության[21]։

Հետաքրքրություն է ներկայացնում նաև Մակասար քաղաքում ապրող Թ. Ստեփաննոսյանի նամակը, որը նույնպես տպագրված է վերոհիշյալ թերթում։ Նամակագիրը գրում է, որ զգայուն սիրտ ունեցող ամեն մի հայ «պիտի ոչ միայն արտասուք թափած լինի մեր տարաբախտ հայրենակիցների դառն ու ողբալի վիճակի վրայ, այլև շառագնալ պիտի լինի յամոթոյ, մեր ազգային մեռելանման թմրութեան վրա»։ Իր խոսքը ուղղելով ողջ հայությանը, նամակագիրը հարց է տալիս, թե չպե՞տք է արդյոք նրանք օժանդակեն իրենց եղբայրներին նյութական և բարոյական միջոցներով։ Համոզված լինելով, որ հայ ժողովուրդը անպայման պաշտպանության տակ կառնի իր դժբախտ ազգակիցներին, պատասխանում է. «Անհաւատալի է թէ չընեն զայս, կը ստեն հայութեան անունը եթէ այլ ևս անտարբեր մնան։ Չկրնայ մէկը այլ ևս ասել, թէ հայն բերան չունի խօսելոյ, թէ հայն իրեն զգացման ազատ թարգման չունի»։ Այնուհետև առաջ է քաշում համազգային ազատագրական պայքարին օգնելու և բռնատիրության լուծը թոթափելու գաղափարը[22]։

Ինչպես հայտնի է, Մ. Փորթուգալյանի հրատարակած «Արմենիա» թերթը, ինչպես և նրա հիմնադրած «Հայոց հայրենասիրական միությունը», որի անդամները կոչվեցին «արմենականներ», հայ ժողովրդի ազատագրման ծրագրերի իրականացումը կապում էր արևմտա-եվրոպական պետությունների նվաճողական պլանների հետ[23]։

Մարսելյում «Հայոց հայրենասիրական միությանն» հիմնադրման լուրը արձագանք է գտնում նաև Ինդոնեզիայի հայերի մեջ, որոնց հուզում էր արևմտահայերի վիճակի բարելավման և հայկական հարցի լուծման խնդիրը։ «Հայոց հայրենասիրական միությանը» օգնելու համար Բատավիայում՝ Սուրաբայայի և Սեմարանդի հայերի մասնակցությամբ գումարվում է մի ժողով, ուր որոշվում է տարեկան մի նպաստ հատկացնել «Հայոց հայրենասիրական միությանը» և Լոնդոնում լույս տեսնող „L'Arménie" լրագրին։ Այդ գումարը պետք է ուղարկվեր երեք ամիսը մեկ անգամ. յուրաքանչյուր եռամսյակի գումարը պետք է կազմեր 320 ֆրանկ 60 սանտիմ, որը հավաքվելու էր Բատավիայի, Սուրաբայայի և Սեմարանդի հայերի միջոցով։ Բացի այդ, Բատավիայի հայ կանայք, Սուրաբայայի և Սեմարանդի կանանց հետ միասին, մի մասնաժողով են կազմում և ձեռագործներ են պատրաստում վիճակահանության դնելու համար։ Վիճակահանությունից գոյացած հասույթի կեսը՝ 551 ֆրանկ 71 սանտիմ, մասնաժողովի որոշման համաձայն հասցվում է վերոհիշյալ միության վարչությանը[24]։

Սրանից բացի, բազմաթիվ ինդոնեզահայեր առանձին-առանձին հանդես են գալիս իրենց նվիրատվություններով, հօդուտ նույն նպատակի[25]։

Այսպես նաև Ջավայի հայերը 20 անգլիական ստերլինգի ռումարով օժանդակում են Լոնդոնում գործող Կարապետ Հակոբյանին, որը գործում էր հայկական հարցի պրոպագանդման ուղղությամբ։ Ինդոնեզահայերին գրած իր նամակում Կ. Հակոբյանը հայտնում է, որ իր գործունեության համար մեծ նշանակություն ունի Բատավիայի ազգային վարչության կողմից ցույց տրվող քաջալերությունը։ Ըստ արժանվույն գնահատելով ինդոնեզահայերի ազգասիրական ազնիվ հոգին, նա նշում է. «Այս առաջին անգամ է դի մի «կաղմաւորեալ» հայ հասարակութիւն և ազգային վարչութիւն, Հայաստանէն այնչափ հեռաւոր ի մի ծաղ աշխարհի գտնուելով, նուիրէ

21 «Արմենիա», 1886, № 34։
22 «Արմենիա», 1886, № 2։
23 Հմմտ. «Հայ ժողովրդի պատմություն», մասն Բ, 1958, էջ 149։
24 «Արմենիա», 1891, № 85։
25 «Արմենիա», 1892, № 54։

իր օժանդակութիւն բանիւք և գործովք։ Այնուհետև ավելացնում է, որ եթե ողջ աշխարհի հայությունը Ինդոնեզիայի հայերի նման գիտակցեր իր պարտականությունը, այն ժամանակ «Հայաստան իր փրկութիւնն ու դարմանն վաղվաղակի պիտի գտնէր»[26]։

Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերում բռնկվող և հետզհետև տարածվող ազատագրական շարժումների արձագանքները հասնելով մինչև Ինդոնեզիա, ավելի մեծ ոգևորություն էին ստեղծում հայերի մեջ։ Նրանք մեծ սիրով շարունակում էին նպաստել ազգային-ազատագրական պայքարի ավելի արագ ծավալմանը։ Այս շարժումներին օգնություն ցույց տալու գործը ավելի լավ կազմակերպելու և ղեկավարելու համար, Ջավայի հայերը մտածում էին հիմնել մի հատուկ կազմակերպություն։ Եվ ահա այդ նպատակով Սուրաբայա քաղաքի հայ երիտասարդությունը ինդոնեզահայ նշանավոր լուսանկարիչ Հ. Քյուրքչյանի խորհրդով հիմնադրում է մի միություն «Հայոց խրախուսական միաբանություն» անունով՝ 1891 թ. օգոստոսին։ Միության նախագահ է ընտրվում Մ. Տեր-Նահապետյանը, իսկ քարտուղար Հ. Հորդանանյանը։ Անդամների թիվը սկզբում 20 էր, իսկ հետո, երբ միության նպատակը պարզ դարձավ բոլորին, բարձրացավ 40-ի։ Այնուհետև պատրաստվեց մի կանոնադրություն դրաբար լեզվով, որը 1892 թ. տպագրվեց Մարսելյում Մկրտիչ Փորթուգալյանի տպարանում։ Ըստ կանոնադրության, միաբանության գլխավոր նպատակն էր նյութական և բարոյական կարողության համեմատ նպաստել այնպիսի ազգօգուտ գործերին, որոնք վերաբերում են հայրենիքի ազատագրությանը։ Այս նպատակի համար պետք է հանդանակություն կատարվեր՝ ուղարկելու համար անհրաժեշտ վայրերը։ Միաբանությունը պետք է ունենար ընթերցարան հայերեն և մի քանի օտար լեզվով թերթերի, հայրենիքի և ընդհանրապես հայ գաղութների մասին տեղեկություններ ունենալու համար։ Եվ բացի այդ, միությունը սերտ համագործակցության մեջ պիտի մտներ ուրիշ ազգային կազմակերպությունների հետ։ Միաբանությունն ունենալու էր իր վարչությունը, որը վերընտրվելու էր մի տարուց հետո։ Վերջինս պետք է մտածեր եկամուտներն ավելացնելու միջոցների մասին։ Միությունը կազմված էր լինելու երկու ժողովներից՝ ընդհանուր և վարչական, որոնք ընկերության գործադիր մարմինն էին։ Բացի ամսական ժողովից, վարչությունը 6 ամիսը մեկ անգամ պետք է ունենար ընդհանուր ժողով, որին հրավիրվելու էին մոտակա վայրերի անդամները։ «Հայոց խրախուսական միաբանությանը» կարելի էր անդամագրվել կամ նվիրատվությամբ անդամակցել. նրա անդամ կարող էր լինել յուրաքանչյուր հայ, որը կվճարեր մուտքի տուրք՝ 5 դիլդեր և ամսավճար՝ 2,5 դիլդեր։ Այնուհետև 100 դիլդեր կամ ավելի վճարող նվիրատուն արձանագրվում էր պատվո անդամ։ Ընդհանուր ժողովի հավանությամբ կարելի էր որևէ բարերարի կամ նշանավոր ազգային գործչի պատվավոր անդամ ընտրել։ Միաբանության ամբողջ եկամտի 25 տոկոսը պետք է պահպանվեր դրամատան մեջ, որին միայն խիստ անհրաժեշտության դեպքում կարելի էր ձեռք տալ։ Միությունը չէր կարող լուծվել այնքան ժամանակ որքան որ անդամների թիվը առնվազն 5 հոգի էր։ Լուծվելու դեպքում նրա ողջ ունեցվածքը և պատրաստի գումարը պետք է հանձնվեր Բատավիայի «Հայկյան միաբանությանը»։ Վերջինս դրամի կեսը պետք է տրամադրեր այն հայրենասիրական միությանը, որի նպատակը միևնույնն է, ինչ որ խրախուսական միաբանությանը, այն է՝ օգնել Արևմտյան Հայաստանի ազատագրության ազնիվ գործին, իսկ մյուս կեսը մնալու էր ավանդ Նոր-Ջուղայի Ս. Կատարինե օրիորդաց դպրոցի անունով[27]։

19-րդ դարի 90-ական թթ. հայ ժողովրդի նկատմամբ եղած հալածանքները և ճնշումները ավելի են ուժեղանում։ Սուլթանական կառավարության կողմից նորանոր ծրագրեր էին մշակվում ավելի մեծ մասշտաբով կոտորածներ կազմակերպելու համար։ Այս շրջանում հայ մտավորականներից ոմանք, որոնց թվում Նյու-Յորքում լույս տեսնող «Հայք» ամսագրի խմբագիր Մ. Գաբրիելյանը, հակադրվելով Մ. Փորթուգալյանին և քաղաքական տարբեր հոսանքներին առաջ էին քաշում հայ ժողովրդի ազատագրության համար միասնական պայքարի գաղափարը և այն միտքը, թե նախ և առաջ անհրաժեշտ է հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցությունը զարգացնել լուսավորության միջոցով և խոհեմաբար նախապատրաստվել ազատագրման գործի իրականացման համար[28]։

1891 թ. Մ. Գաբրիելյանը ձեռնամուխ է լինում «Կենտրոնական Հանձնախումբ» անունով

---

26 «Արմենիա», 1886, № 77։

27 Հ. Հորդանանյան, էջ 118—120։ Թ. Գուշակյան, էջ 311—314։ «Հայք» (ամսագիր), Նյու-Յորք, 1892, № 12, էջ 93—94։

28 Ամերիկահայու տարեցույցը, Բոստոն, 1912, էջ 130—132։

մի համազգային միության ստեղծմանը՝ հայ ժողովրդի ազգային շարժումներին օգնելու համար։ Այնուհետև կազմվում է հանձնախմբի ծրագիրը, որի պատճենը քննարկման համար շրջաբերական նամակով ուղարկվում է գանազան հայ գաղութներին, այդ թվում նաև Ինդոնեզիայի հայությանը, միաժամանակ դիմելով մասնակցելու հանձնախմբի ընտրությանը[29]։ 1892 թ. հունիսի 12-ին «Կենտրոնական Հանձնախմբի» անունով ստացվում է Ջավա կղզու Սուրաբայա քաղաքի «Հայոց խրախուսական միաբանության» նամակը, ուր նկարագրվում է, թե ինչպիսի ջերմ ընդունելության և հավանության է արժանացել վերոհիշյալ հանձնախմբի ծրագիրը, միաբանության այս առթիվ գումարված ժողովում։ Նամակում մեծ պատրաստակամություն է հայտնվում ամեն ջանք գործ դնելու հայրենասիրական այս գործին օգնելու համար, թե՛ նյութապես և թե՛ բարոյապես։ Կայացած ժողովում միաբանությունն ընդունում է հետևյալ որոշումները.

«1) Զի միաբանութիւնս նկատել զծրագիր յանձնախմբիդ յոյժ գործնական և օգտակար ի բարւոք լուծումն հայկական խնդրոյն, կամ որ նոյն է՝ ի ձեռս բերելոյ զազատութիւն հարստահարեալ եղբարցն մեր՝ որք ընդ անամօթ լծով բռնութեան Թուրքաց հիւծին։

2) Զի միաբանութիւնս ամենայն ջանս ի գործ դիցէ դրամ հանգանակել ի նպաստ կեդրոնական միութեանն։

3) Զի միաբանութիւնս այս՝ որպէս գրաւական անկեղծ համակրանացն իւր կանխիցէ առաքել առ Ձեզ 600 ֆրանք—որպէս ի ներփակեալ ցուցակիս—առ ի ունել ընդ տրամադրութեամբ կազմել ի կեդրոնական միութեանն, որոյ կազմութիւնն կարի դժբախտաբար մինչ ցարդ չէ ի գլուխ ելեալ»։

Այնուհետև ինդոնեզահայերը նամակում մեծ գովասանքով են արտահայտվում համազգային միության նախաձեռնող Մ. Գաբրիելյանի մասին, որը մեծ եռանդով ձեռնամուխ է եղել մի այդպիսի դժվարին և պատասխանատու գործի։ Հանձնախմբի նախագահ Գ. Գասպարյանը Սուրաբայայի «Հայոց խրախուսական միաբանության» նախագահ Մ. Տեր-Նահապետյանին ուղղած շնորհակալական նամակում իր խորին երախտագիտությունն է հայտնում ինդոնեզահայերի այսպիսի անձնվեր քայլի և գործնական հայրենասիրության համար, շեշտելով, թե «տարակոյս չունիմք թէ բազում տխրեալ հոգիներ պիտի զուարթանան և շատ վարանամիտներ պիտի ցունց առնուն ի լուր ձեր այս հայկարժան նախաձեռնութեան, և կենդրոնացման մեծ խնդիրն նոր փութով առաջ պիտի մղուի դէպ ի բարի վախճան և կատարումն»։ Վերջում ավելացնում է, թե նկատի ունենալով այն հանգամանքը, որ «Կենտրոնական Հանձնախումբ»-ը դեռ չի կազմվել, ետ է վերադարձվում 600 ֆրանկը, որն առաջարկվում է հանձնել Փարիզի հայոց հայրենասիրական հանձնախմբին, որը պետք է ստանձներ «Կենտրոնական Հանձնախմբի» գործավարությունը[30]։

Կարճ ժամանակ անց՝ «Հայոց խրախուսական միաբանություն»-ը, «Հայք» ամսագրի հրատարակմանը նպաստելու համար, ամսագրի խմբագրությանն է ուղարկում 400 ֆրանկի փոխանակագիր, որի մեջ կային երեք բաժնեգներ[31]։ Բացի այդ, Ջավայի Բատավիա քաղաքի հայերի նախաձեռնությամբ էլ հավաքվում է 40 դոլար, նույն նպատակի համար[32]։

Շատ իրավացի կերպով «Հայք»-ը նշում է. «Այս թերթը մինչև այժմ կանգուն պահող ամենէն հզօր նեցուկները մեր Փարիզի հայրենակիցները եղած են զոյգ ընդ Սուրաբայայի հայրենակցաց»[33]։ Իրավամբ չի կարող հիացմունք չառաջացնել հեռավոր Ինդոնեզիայում գոյություն ունեցող հայրենասիրական միության գործունեությունը, որը բոլոր միջոցներով աշխատում էր մասնակից դառնալու հայ ժողովրդի փրկության գործին նվիրված ձեռնարկումներին։

Այն ժամանակ, երբ հայ մտավորականության մտահոգության գլխավոր առարկան էր հայ ժողովրդի ծանր և հուսահատական վիճակը, որը օրէցօր գնալով ավելի էր վատթարանում. հայկական որոշ թերթերի խմբագիրներ փոխանակ հայ ժողովրդի փրկության ելքը որոնելու, իրենց անձնական շահերից ելնելով աշխատում էին դուրս գալ այնպիսի հայրենասիրական նախաձեռնության դեմ, ինչպիսին էր հայոց համազգային միության ստեղծումը։ Այս բանը չէր կարող զայրույթ չառաջացնել հայության գանազան գանգվածների մեջ։ Եվ ահա հեռավոր Ինդոնեզիայի Սեմարանդ քաղաքից ստացվում է մի նամակ, ուղղված Նյու-Յորքի «Հայք» ամսագրի խմբագիր Մ. Գաբրիելյանին։ Բերում ենք մի հատված այդ անանուն նամակից, որի հեղինակը շատ իրավացի կերպով իր վրդովմունքն է հայտնում վերոհիշյալ երևույթի վերաբերյալ. «Այսօր—հայոց

29 «Հայք», 1891, № 2, էջ 10—12, № 10, էջ 78—79։
30 «Հայք», 1892, № 16, էջ 122—123։
31 «Հայք», 1892, № 24, էջ191։
32 «Հայք», 1896, № 8, էջ 126։
33 «Հայք», 1897, № 5, էջ 80։

համար վշտալից օրս—այնինչ հարստահարեալ եղբարք մեր—դողչիր ազգն ողջոյն—ձայն բարձրացուցանելով փրկութիւն կ՝աղաղակէ և այնինչ մայր Հայաստան կը հեծէ ընդ լծով բռնապետութեան անօրինաց և յորժամ դառնացեալ և ցասմամբ լի են սիրտք մեր, և աստ՝ անդ ի խնդիր եմք և դոչեմք օգնութիւն, օգնութիւն, արդարև զայրոյթ անհնարին ի վերայ գայ ի նկատելն թէ ի միջոյ մերմէ յերեւան եկեալ են դաս մի խմբագրաց որք լոկ վասն անձնական շահուց և փառասիրութեան, զամենայն ճիգն իւրեանց թափեն առ ի քանդել զհիմն այն շինուածոյն որոյ սկզբնաւորութիւն լեալ է ի ճշմարիտ զաւակաց Հայկայ, յայնպիսի եռանդուն հայրենասիրաց յորոց շաւղի պարծանս դդամ տեսանել այսօր և զՁեզ անընկճելի յարատեւութեամբ... փոխանակ ձայն մարդասիրութեան բարձրացուցանելոյ, փոխանակ սիրոյ, միութեան և հայրենեաց դատին ջատագով և պաշտպան կալոյ... փոխանակ բոլոր ամբառնալոյ ընդդեմ անգթութեանց և խժդժութեանցն մոլեռանդ և վայրագ Թրքաց և Քրդաց, անձնական յարձակմունս առնեն ընդդէմ Ձեր և այլոց»։ Նա զայրացած հարց է տալիս, թե այսպիսի՞ եղանակով միթե պետք է սրրել այդքան դառնությունների և փորձությունների ենթարկված հայ ժողովրդի արտասուքը, «այսպիսի՞ միջոցօք վերջապէս կամիմք զկարծիս և զկարեկցութիւնս օտարաց ի մեզ ձգելոյ։ Բացահայտելով նրանց բռնած տարօրինակ և վնասակար դիրքը, նամակագիրը ցույց է տալիս, թե ինչպիսի աղետալի հետևանք կարող է ունենալ հայրենասիրական այսպիսի կարևոր նախաձեռնության նկատմամբ նրանց դրսևորած նմանօրինակ վերաբերմունքը[34]։

Օսմանյան պետության կողմից ստրկության և բնաջնջման դատապարտված հայ ժողովրդին ազատության ձեռք մեկնելու կոչ է հանդիսանում Սուրաբայայից ուղարկված հետևյալ նամակը Լոդիս ստորագրությամբ՝ գրված 1892 թ. հոկտեմբերի 4-ին։ Հեղինակը ընդգծելով ազգային միասնության գաղափարը, վնասակար է համարում գործող կուսակցությունների անջատ գործունեությունը և գտնում է, որ հայրենիքի փրկության գործին ծառայելու համար անհրաժեշտ է կենտրոնացնել բոլոր ուժերը. «Եթէ իսկապէս միևնույն է իղձ և նպատակ մեր, բնաւ և բնաւ վայել չեն մեզ որևէ կուսակցութեան բաժնուիլ, և ոչ միայն վայել չէ, այլև չիք տարակոյս, որ մեր այժմեան դրութեան մէջ կուսակցութեանց գոյութիւն, մեծամեծ վնասներ կը պատճառեն հայրենեաց դատին, որպէս պատճառսլ են արդէն»։ Հեղինակը այս նամակով համազգային համերաշխության կոչ է անում իր ժողովրդի մտավորական և հասարակական գործիչներին, որպեսզի նրանց դնելիք իմաստուն ծրագրով կարողանանք «զօրեղապէս պահանջել ազգի իրաւանց իրագործումն այն բոլոր տէրութիւններէն որք Պերլինայ վեհաժողովի դաշնագիրն ձեռնագրել են»։ Վերջում եզրափակում է ասելով, որ չպետք է ձգձգել այդ հրատապ հարցի լուծումը, օգնության հասնելու համար շտապել, որ նոր կոտորած սկսվի Հայաստանում, որովհետև «այն ժամանակն այլ ևս հարկ չէ մեզ խոովիլ և փրկութեան յուսալ, վասն զի ուշ է և բոլորովին անօգուտ։ Այսօր է մեզ համար ժամն գործելոյ։ Երկաթն պետք է ծեծեմք որքան դեռ տաք է»[35]։

1895 թ. մարտի 8-ին Բատավիայում տեղի է ունենում մի ժողով, որին մասնակցում էին նաև Սուրաբայա և Սեմարանդ քաղաքներում ապրող հայերի ներկայացուցիչները։ Օրակարգի գլխավոր հարցն էր՝ հայրենիքին օգնություն ցույց տալու գործը։ Ժողովում մշակվում են միջոցառումներ այս գործի կազմակերպման համար։ Այնուհետև ընթերցվում է Կալկաթայում անգլերեն լեզվով լույս տեսնող «Արա» ամսագրի խմբագիր Մելիք Բեգլարի նամակը ուղղված Բատավիայի հայերին, ուր նա տեղեկացնում է, թե Կալկաթայի հայերը ժողով են գումարել իրենց թշվառացած հայրենակիցներին օժանդակելու համար, ընդունելով 8 կետից բաղկացած որոշումներ։ Նամակագիրը առաջարկում է Բատավիայի հայ հասարակությանը մի այդպիսի ժողով գումարել, քննարկել այդ որոշումները և իրենց կարծիքը հայտնել դրանց մասին։ Ժողովում կարդացվում են վերոհիշյալ որոշումները, որոնց կապակցությամբ առաջանում են տարբեր կարծիքներ այն պատճառաբանությամբ, որ ինչպես հարկն է չեն ուսումնասիրել հայկական խնդիրը, լավ տեղյակ չեն Արևմտյան Հայաստանի տեղական ու քաղաքական հանգամանքներին, որպեսզի կարողանային համարձակ առաջարկություններ անել այն համոզմամբ, որ դրանք վնաս չեն հասցնի հայ ժողովրդին։ Բայց հաշվի առնելով այն, որ Կալկաթայի ազգայինների հետ չի կարելի համագործակցել առանց որոշումների բոլոր կետերի շուրջը համաձայնության գալու և համոզվելով դրանց օգտակարության մեջ, հավանություն են տալիս և ընդունում որոշումների կետերն ամբողջությամբ[36]։

Ինչպես հայտնի է՝ 1894 թ. սուլթանի հրամանով մասսայական կոտորած կազմակերպվեց

---

34 «Հայք», 1892, № 14, էջ 108—109։

35 «Հայք», 1892, № 22, էջ 173։

36 «Արմենիա», 1895, № 72։

Սասունում, որը հանդիսանում էր հայ ազգային-ազատագրական շարժման կարևորագույն կենտրոններից մեկը։

Ջամայում հոլանդերեն լույս տեսնող «Սուրաբայա Կուռանտ» թերթը իր 1895 թ. հունիսի 8-ի համարում հատուկ հոդված է տպագրում Սասունի կոտորածի վերաբերյալ, ուր նկարագրում է թուրքերի բարբարոսությունները հայերի նկատմամբ և առաջարկում է ստեղծել մի նպաստամատույց հանձնաժողով, աղետյալներին օգնելու համար։ Այնուհետև Ինդոնեզիայի հայ գաղութի ականավոր ներկայացուցիչ Հ. Հորդանանյանը վերոհիշյալ թերթի հունիսի 29-ի համարում հանդես է գալիս «Ուր մնաց բարեգործութիւնն» վերնագիրը կրող հոդվածով, ուր նախ շնորհակալություն է հայտնում թերթի խմբագրին այդպիսի նախաձեռնության համար և հետո անհանգստանում է, որ հանձնախմբի կազմակերպումը ձգձգվում է։ Հոդվածագիրը ավելացնում է. «Որպես որ հայտնի է Ձեր ընթերցողներին, մոլեռանդ թուրքերի և վայրագ քուրդերի անզէն հայերի վրա գործադրած սոսկալի անգթությունները տեղի ունեցան օգոստոսի վերջին շաբաթվա և սեպտեմբերի առաջին երկու շաբաթների ընթացքին... Թուրքական կառավարությունը է՛լ ավելի քաջալերեց այդ չարիքը։ Իշխանության դատապարտելի անհոգությամբ էր անշուշտ, որ քաֆիրների-քրիստոնյա հայերի կոտորածը երեք երկար շաբաթներ շարունակվեց առանց ցեղի կամ հասակի խտրության։ Եվ ինչո՞ւ, որովհետև խեղճ գյուղացին հանդգնել էր իր տզրուկներին, տերության պաշտոնյաներին հայտարարել, թե քուրդ ավազակներից կողոպտված լինելով, իր դառն աղքատության մեջ անկարող էր երրորդ անգամ պահանջված հարկը վճարել։ Հոդվածի վերջում, նա դիմում է Ինդոնեզիայի բնակչությանը և հայերին, օգնության ձեռք մեկնելու կոտորածից տուժածներին, հիշելով, որ Բատավիայում արդեն հանձնախումբ է կազմվել նույն նպատակի համար և հավաքվել է 2500 գիլդեր։ Հաջորդ օրը Սուրաբայայում հայերը գումարում են մի ժողով, ուր ընտրվում է երեք հոգուց բաղկացած մասնախումբ, որի ջանքերով նախապես հավաքված գումարը կրկնապատկվում է։ Որոշ ժամանակ անց, զանազան նշանավոր անձնավորությունների նախաձեռնությամբ ստեղծվում է 22 հոգուց բաղկացած հանձնախումբ, որի նախագահ է ընտրվում Պ. Հովակիմյանը, իսկ պատվավոր նախագահ՝ հոլանդական նահանգապետը։ Մի ընդարձակ շրջաբերական է պատրաստվում հանձնախմբի կողմից և ուղարկվում է թերթերին, բացի այդ երկու հայ կանայք մի ամբողջ շաբաթ կառքով շրջում են զանազան բնակավայրերում հանգանակություն կատարելու։ Այս բոլորի արդյունքը լինում է այն, որ ընդհանուր հանգանակված գումարը դառնում է 8000 գիլդեր։ Հանձնախմբի որոշման համաձայն գումարը փոխանցվում է Կ. Պոլիս հոլանդական դեսպանին և բաժանվում է Սասունի աղետյալներին37։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, օսմանյան բռնակալ տիրապետության լծի տակ գտնվող ու դարեր շարունակ կեղեքվող հայ աշխատավոր զանգվածների ծանր վիճակը և դրա հետևանք հանդիսացող ազատագրական շարժումները լայն արձագանք էին գտնում ինչպես ողջ աշխարհում ցրված հայ ժողովրդի լավագույն զավակների, այնպես էլ Ինդոնեզիայի հայ գաղութի մեջ։ Նրանք ուշի ուշով հետևում էին Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող այդ շարժումներին, ամեն ջանք գործադրելով թե՛ նյութապես և թե՛ բարոյապես իրենց ազատատենչ եղբայրներին օգնության հասնելու համար։

Այս առումով բնորոշ են հայ մեծ լուսավորիչ-ռևոլյուցիոներ Միքայել Նալբանդյանի խոսքերը. «Պաշտպանել այն հայի առատաթուր կոխված իրավունք է մեր կյանքի բուն խորհուրդը և նպատակը։ Եվ այս նպատակին հասնելու համար չէ պիտո ընկրկինք ոչ բանտի, ոչ աքսորի առջև, ոչ միայն բանիւ և գրչով, այլև զենքով ու արյունով։ Ահավասիկ մեր դավանությունը, որի մեջ տեսնում ենք ազգի փրկությունը»38։ Իրավամբ, Նալբանդյանը առաջ քաշելով այս «դավանությունը», նրա մեջ էր տեսնում «ազգի փրկությունը»։ Այս «դավանությամբ» էին առաջնորդվում և գաղթավայրերի հայերը։ Մինչև անգամ, օվկիանոսներով ու ծովերով բաժանված հեռավոր Ինդոնեզիայի հայ գաղութի անդամները, այլ գաղութների հետ միասին, օգնության ձեռք էին մեկնում ազատագրության դրոշ բարձրացրած իրենց եղբայրներին։

---

37 Հ. Հորդանանյան, էջ 121—124։ «Հայք», 1895, № 8, էջ 118։ «Հայք», 1896, № 2, էջ 24—25։

38 Միքայել Նալբանդյան, Երկու տող և ազգային թշվառություն, Երևան, 1939, էջ 24—25։